ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/370 «04» 12 2025 թ.

«ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ
(ՀՎՀՀ 04459595)
ՀՀ Արմավիրի մարզ, գ.Նալբանդյան
2 թղմ .2 փող.փուն 5
էլ. հասցե՝ knazaryan681@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «Նազարյան Շին 2025» ՍՊԸ-ի միջև 13.11.2025թ.-ին կնքված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2025/Է-74 ծածկագրով պայմանագրի շրջանակում «ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ-ն պետք է կատարեր ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Երևան քաղաքի վարչության թիվ 7 ՀՓՋ-ի մասնաշենքի տանիքի մասնակի ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքները, որի կատարումից վերջինս հրաժարվել է՝ չներկայացնելով օրենքով սահմանված ժամկետում ստորագրված համաձայնագիր:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից տույժ չի կիրառվում, քանի որ մասնակիցը հրաժարվել է աշխատանքների կատարումից մինչ համաձայնագիր կնքելը: Իսկ տուգանքի չափը հավասար է 11 970 /տասնմեկ հազար ինը հարյուր յոթանասուն / ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 3.1.4-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և կատարողը խախտել է աշխատանքների կատարման ժամկետը:
Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ Ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ՆԳՆ և «ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2025/Է-74 ծածկագրով պայմանագիրը:Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 467 000 / չորս հարյուր վաթսունյոթ հազար ՀՀ դրամ և որպես պայմանագրի ապահովման գումար 311 000 /երեք հարյուր տասնմեկ հազար ՀՀ դրամ/ փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000698 և N900008000664 հաշվեհամարներին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025»-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

« 04 » ——12—— 2025թ.

ք.Երևան

Կատարող՝ Է. Մնացականյան
Հեռ. 010-59-64-86